



EASTERN PARTNERSHIP
Civil Society Forum



National Endowment
for Democracy
Supporting freedom around the world

Ոչինչ մեզ համար առանց մեր մասնակցության Վերլուծական ակնարկ

ԵՐԵՎԱՆ 2017



Ընդունվեց օրենք կամ որևէ իրավական ակտ, մտավ կիրառության մեջ և... պարզվեց, որ այն անօգուտ է, իսկ երբեմն նաև վնասակար տվյալ երկրի բնակչության որոշ խմբերի համար: Նման որոշումները հենց ընդունման պահից հանդիսանում են քննադատության առարկա և զգում են բարեփոխման անհրաժեշտություն, ինչի համար էլ պայքար են մղում տվյալ խմբերի շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունները, շահառուները և նրանց միանում են լրատվամիջոցները: Այսպիսի մոդելը գործում է զարգացող բազմաթիվ երկրներում և, ցավոք, Հայաստանն այս առումով բացառություն չէ: Ասել, որ ՀԿ-ների պայքարը արդյունքի չի հանգեցնում նույնպես սխալ կլիներ, սակայն ինքստինքյան նման աշխատելաճը բերում է լրացուցիչ ժամանակային, նյութական և մարդկային ռեսուրսի ծախսմանը: Հարց է առաջանում՝ իսկ ի՞նչն էր խանգարել այս բոլոր խմբերի շահերը հաշվի առնել ամենակարգում, տվյալ օրենսդրական նախաձեռնության բեղմնավորման ժամանակահատվածում: Բերեմ «Ունիտն» հասարակական կազմակերպության կողմից որոշում կայացնողների շրջանակում իրականացված սոցիոլոգիական հետազոտության պատասխաններից մի քանի օրինակ

- ✓ Հայաստանի ներկայիս տնտեսական վիճակը թույլ չի տալիս հաշվի առնել բոլոր խմբերի հարմարավետությունը
- ✓ Այդ օրենսդրական որոշումը տվյալ սոցիալական խմբին չի վերաբերում
- ✓ Տվյալ խումբը պարզապես մոռացվել է... քանի որ երբևէ որոշակի բարեփոխման առաջարկություն չի հնչել նրա կողմից

Այս ենթադրությունների շղթան վերացնելու համար անհրաժեշտ է ընդամենը անցնել ներառական, կամ այլ կերպ ասած, մասնակցային որոշումների կայացման սկզբունքին, երբ ցանկացած մակարդակում կայացվող որոշումը, արդեն իսկ նախագծումից անցնում է բոլոր շահագրգիռ կողմերի հետ քննարկման և առաջարկներով փոխանակման փուլ: Միտումնավոր եմ ներառական բառի հետ մեկտեղ գրում մասնակցային, քանի որ ներառական բառը համատարած սխալ է մեկնաբանվում և նույնականացվում է հաշմանդամության թեմային հետ և չնայած, որ այս վերլուծական ակնարկի հիմնական շեշտը դրվելու է հենց հաշմանդամություն ունեցող անձանց/ՀԿ ների մասնակցության բարձրացմանը կամ ապահովմանը, այնուամենայնիվ ներառական որոշումներ ասվածը վերաբերում է ոչ միայն վերջիններին այլ բոլոր այն խմբերին, որոնց խոցելիությունը հենց պայմանավորված է առանձնահատուկ կարիքով: Ի՞նչն է պակասում այդ գործընթացի համար և ինչո՞ւմ է այդ ներառականության անհրաժեշտությունը կոդիտարկենք ստորև:

Սկսենք վերջին հարցից

Որոշում կայացնողները հաճախ առաջնորդվում են միայն ենթադրություններով՝ ենթադրությունների շարքերին է դասվում, օրինակ այն որ հաշմանդամություն ունեցող անձին հետաքրքրում են և անհրաժեշտ են միայն սոցիալական աջակցության և բժշկական ծրագրեր:

Իրականությունն արդեն վաղուց ապացուցել է, որ չկա մի ոլորտ՝ կրթություն, տրանսպորտ, գրոսաշրջություն, աշխատանք, բնապահպանություն, վերարտադրություն, ընտրություններ և այլն, որի որոշումները առհասարակ չվերաբերեն հաշմանդամություն ունեցող անձանց:

Այս ենթադրությունները հանգեցնում են նրան, որ հաշմանդամություն ունեցող անձանց՝ եթե անգամ ներգրավվում են որևէ որոշման քննարկման, ապա հիմնականում նշված ոլորտների շրջանակներում: Այն էլ անգամ այդ ներգրավումը լիարժեք չի՝ ոչ միշտ են հաշվի առնվում տեխնիկական հարմարեցման հանգամանքները (անցկացման վայրը ֆիզիկապես հարմարեցված չէ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար, տրամադրվող նյութերը

հիմնականում չեն ներառում ձայնային տարբերակները, հանդիպումներին բացակայում է սուրդոթարգմանիչը և այլն): Ի դեպ հենց վերջերս՝ 2017թ. ապրիլին տեղաշարժման խնդիր ունեցող անձանցից շատերը չկարողացան իրենց քաղաքացիականա պարտքը կատարել և որոշում կայացնել երկրի համար այդքան կարևոր նշանակություն ունեցող գործընթացում՝ ԱԺ-ի ընտրություններում: Օրինակ Երևանում դիտարկած 67 ընտրատեղամասերից միայն 3 էին լիովին հարմար սայլակով մարդկանց համար:

ՀՀ նախարարություններից մեկի ներկայացուցիչը նշեց, որ իրենք միշտ պատրաստ են ներգրավել հաշմանդամություն ունեցող անձանց բոլոր աշխատանքային փուլերում, սակայն հաջորդած մատչելիության մասին հարցը վերհանեց, որ ոչ մի պայման դրա համար չի ապահովվում: Այսինքն, գործ ունենք անուղղակի խտրականության հետ

Տնտեսական վիճակով արդարանալով և դուրս թողելով ոլորտից որոշակի խումբ, պետությունը դրսևորում է խտրականություն և խախտում է իր իսկ ստորագրած և վավերացրած միջազգային փաստաթղթերի պարտավորությունները:

Որոշումների նախագծման փուլում բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավումը թույլ կտա նաև հասնել մաքսիմալ արդյունավետության գումարների մինիմալ ծախսի պարագայում: Ենթադրություններով կատարված «բարեփոխումների» ճակատագրի մասին ասվեց ակնարկի ամենասկզբում:

Թույլ տալ կրկնակի ծախսեր տնտեսապես անապահով իրավիճակում երկրի համար չարդարացված շռայլություն է:

Եվ ամենակարևոր խնդիրն այն է, որ այդ բոլոր ներգրավման փորձերը հիմնականում իրականացվում են որոշում կայացնողի բարի կամքի դրսևորման պայմաններում և կապված են գուտ մարդկային գործոնից:

Ուրեմն ասեմ էլի, չտա աստված եթե լինեն տենց դեպքեր, կույր սայլակով, մենք աշխատում ենք մեր գյուղապետարանի, մեր մարդկանց միջոցով մեր մարդկանց բարձրացնել, իջացնել:

Իրավունքի իրացումը որպես բարեգործության դրսևորում ընկալելու միտում ունեն նաև շահառուները: Գիտելիքների բացը թույլ չի տալիս դիտարկել իրենց հանդեպ ցուցաբերվող տարբերակված մոտեցումը որպես խտրականության դրսևորում: Այսպիսով, տեսնում ենք, որ որոշումների կայացման գործընթացը մասնակցային չի դառնում ոչ միայն որոշում կայացնողների մեղավորությամբ:

Դրան խանգարում է նաև շահառուների իրազեկվածության, մոտիվացիայի պակասը: Հաշմանդամություն ունեցող անձանց զգալի տոկոսը գերադասում է հանդես գալ պասիվ դիտորդի դերում՝ խուսափում է բարձրաձայնել իր խնդիրները լրատվամիջոցներով, կամ սոց. ցանցերում: Դրան խանգարում է ամոթի, վախի, կամ անվստահության զգացողությունը: Անվստահ են, քանի որ չունեն բավարար գիտելիքներ: Այս առումով, իհարկե, հասարակական կազմակերպության անելիքները դեռ բավականին շատ են՝ ձևավորել ակտիվ և նախաձեռնող և իրազեկ շահառու-անդամ: Նշենք նաև, որ իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ խտրականություն երևույթի լիարկատար ընկալումը առկա չէ նաև բազմաթիվ ՀԿ-ների մոտ:

Հաշվի առնելով նշված խոչընդոտները «Ունիսոնը» տեսնում է իրավիճակի բարևփոխման մի քանի ճանապարհ:

✓ Նախևառաջ, որպեսզի որոշումների կայացման գործընթացը կախված չլինի որևէ անձի բարի կամքից և իրականացվի հաստատված կարգով, անհրաժեշտ է, որ

պետական կառույցներն ընդունեն դրան վերաբերող որոշակի քաղաքականություն: Ընդ որում այդ քաղաքականության իրականացումը չափելի դառնա:

✓ Չափելիությունը կարելի է դիտարկել հատուկ մշակված ստուգաթերթով, որում ընդգրկված կլինեն ներառականության ապահովմանն ուղղված տարբեր գործոններ՝ ֆիզիկական, տեղեկատվական մատչելիություն, տվյալ խմբի ներկայացուցիչները ներկայացվածության տոկոս, հատուկ հանձնաժողովների առկայություն և այլն:

✓ Բարձրացնել իրազեկվածությունը որոշումների կայացմանը մասնակից դառնալու հնարավորությունների մասին շահառու խմբերի մոտ՝ կազմակերպել հեռուստահաղորդումներ, հեռարձակել համապատասխան սոցիալական գովազդներ:

✓ Զարգացնել հասարակական կազմակերպությունների (հատկապես մարզերում գործող) կարողությունները՝ նվիրված հենց իրավունքների պաշտպանությանը և խտրականություն դրսևորմանը:

✓ Եվ այս ամեն հետ մեկտեղ որպես գլխավոր դերակատար դիտարկել նաև 4-րդ իշխանությունը՝ լրատվամիջոցը, որի ներգարվումը անգնահատելի դեր կխաղա և իրազեկման և հրատապ խնդիրներին արձագանքման մեջ:

Որպես եզրափակում կրկին բերեմ տվյալներ «Ունիտնի» իրականացրած հետազոտությունից՝

Պետական մարմինների ներկայացուցիչները երկրում որոշումների կայացման ներառականությունը 10 բալանոց համակարգում գնահատում են 7,1, իսկ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 5,1: Հուսանք, որ մեր առաջարկած բարեփոխումների արդյունքում երկուսի ցուցանիշներն էլ կտան զգալի աճ:

The project benefits from the support through the EaP CSF Re-granting Scheme. Within its Re-granting Scheme, the Eastern Partnership Civil Society Forum (EaP CSF) supports projects of the EaP CSF members with a regional dimension that contribute to achieving the mission and objectives of the Forum.

The donors of the Re-granting Scheme are the European Union and National Endowment for Democracy.

The overall amount for the 2017 call for proposals is 290.000 EUR. Grants are available for CSOs from the Eastern Partnership and EU countries.

Key areas of support are democracy and human rights, economic integration, environment and energy, contacts between people, social and labour policies.